

ԳԱԼԻՆԵԱՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆՍ ՄԷՋ

Երէկ, իմբագրատանս մէջ հաճոյքն ունեցանք ընդունելու աշխարհահռչակ լուսանկարիչ Փոլ Գալինեանը, որ միջոցէ մը ի վեր կը գտնուի Իսթանպուլի մէջ: Ինչպէս ծանօթ է, նախկին Լիբանանահայ այժմ Ֆրէզնոյաբնակ Փոլ Գալինեան, Սահակեան Ս. Միութեան Աճառեան սրահին մէջ ցուցադրեց իր «Ուիլիըմ Սարոյեան. մարդը, գրողը» վաւերագրական ֆիլմը:

Այս գծով, Փոլ Գալինեան Իսթանպուլէ վերջ պիտի այցելէ Ադեքսանդրիա, Գահիրէ, Լիբանան, Հալէպ, Դամասկոս, Պոսթըն, այս կեդրոններուն մէջ եւս ցուցադրելու համար միջազգային համբաւի սիրացած ամերիկահայ գրող, թատերագիր, մարդասէր Ուիլիըմ Սարոյեանը քաւելի մօտէն ծանօթացնելու եւ յաջորդ սերունդները հաղորդ դարձնելու համար անոր զգացումներուն եւ ապրումներուն: Այս շրջապատյուններէն վերջ՝ համբաւաւոր լուսանկարիչը Օգոստոս ամիսը պիտի անցընէ հանգիստ առնելով, իսկ Սեպտեմբեր 1-Հոկտեմբեր 15 թուականներու միջեւ ֆիլմը պիտի ցուցադրէ Հայաստանի մէջ, Մշակոյթի նախարարութեան պաշտօնական հրաւերով: Այս առթիւ, «Ուիլիըմ Սարոյեան. մարդը, գրողը» ժապաւէնը պիտի ցուցադրուի Հայաստանի բոլոր քաղաքներուն, գիւղերուն, ինչպէս նաեւ Արցախի մէջ: Ինչպէս Իսթանպուլի, նոյնպէս ալ բոլոր ցուցադրութեան ճամբորդութիւններուն արուեստագէտին կ'ընկերանայ կողակիցը՝ Արաքսի Գալինեան:

Շուրջ մէկ ժամուան այցելութեան ընթացքին, Ուիլիըմ Սարոյեանի սիրահար Գալինեան, մեզի յայտնեց, թէ դրական տպաւորութիւններով լեցուած է Իսթանպուլի նկատմամբ: «Այն ինչ որ լսած էի Ամերիկայի մէջ, երբ տեսայ Իսթանպուլը եւ ապրեցայ մի քանի օր, իմ բոլոր գաղափարները յեղաշրջուեցան», ըսաւ ծանօթ արուեստագէտը եւ շեշտեց, թէ ազգած է իր վերայ Իսթանպուլահայութեան հիւրասիրութիւնը, վարուելակերպը և մշակութային ձեռնարկները ու շնորհակալութիւն յայտնեց «Ակօս» շաբաթաթերթին, որ նախաձեռնարկը եղած էր քաղաքիս մէջ ժապաւէնի ցուցադրութեան: Անոր փափաքն է, որ Իսթանպուլի մէջ ֆիլմը կրկին ներկայացուի, որու մասնակցին աւելի հոծ թիւով օտարներ:

Փոլ Գալինեան Իսթանպուլի մէջ կեցութեան օրերուն այցելեց Պատրիարքարան, ուր հիւրը եղաւ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Ս. Արք. Մութաֆեանի: Այցելեց նաեւ Ս. Փ. Հիւանդանոց, Շիշլիի եւ Պաղլարպաշըի գերեզմանատուները, Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, Կեդրոնական Վարժարան, քաղաքի տեսարժան վայրերն ու թանգարաններ: Ինչպէս ծանօթ է, Իսթանպուլահայութիւնը վերջերս զարկ տուած է մշակութային ձեռնարկներու: Այս գծով ան ներկայ գտնուեցաւ «Դալար» պարխոնմբիի ելոյթին, Պէզճեանի Ֆոլքլորի ներկայացման, Զահրատի ծննդեան 75-ամեակի հաղնիսութեան:

Արժէքաւոր արուեստագէտը այս առաւօտ կը բաժնուի Իսթանպուլէն, տարբեր կեդրոններու մէջ շարունակելու համար Սարոյեանը ծանօթացնելու առաքելութիւնը: